

ՀԱՍՏԵ

Rédaction du Journal

«Travounk»

Varna


Федерация НА

Вестникъ

«Нравуникъ»

Варна

Գրադարանք եւ չին տրուիր



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՊԱԹՄԱՆԵՐ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տա. հիսան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու բիւ մէկ ճրարով
Տա. հիսան 14 Ֆր.
Վեցամսեայ 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տա. հիսան 2.60 Տոյ.
Վեցամսեայ 1.50 Տոյ.

ԿԱՆԽԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՍՆԴ.

ԳԱՂԹԱՅԻՆ ՀՈՍԱՆՔԸ

Անճարեկն ազատեցանք
Կարճատեղի շրջանում

Թուրքիոյ Սահմանադրութեան ուրախարհեր վերահաստատումէն առաջ տեւական այժմեթիւն ունեցող և խիստ մտահոգիչ կնճռուտ խնդիր մը դարձած էր զաղթական հարցը, երկրի ճնշող ժողովրդի համբերութիւնը ծայրաստիճանին հասած, նա քամած տառապանքի դու գառնութեան դառն բաժակը, յուսորեկ և ամեն զոհողութիւններու ու պատահականութեան պատրաստակամ, ինքզինք արտասահման նետելու ճարձարայ մը կը փնտռէր, — և երբեմն կը յաջողէր ալ — հոն ազատ չունչ մը առնելու յոյսով, Թուրքիոյ բռնակալական նախորդ ռէժիմին ներքեւ, սակայն, թրքահայ մամուլը բոլորովին անզօր, արտասահմանի հայ մամուլն էր որ կը մաքաւէր, կը ճրգնէր կասեցնելու, կտրելու ծայրը անվերջանալիօրէն շարան շարան երկարող ազգաջնաս ու հայրենաքանդ գաղթական հոսանքին, Սահմանադրութեան հռչակումէն վերջ ալ յոյսն ու հաւատը ունէինք մենք թէ՛ երկրի ժողովուրդը այլեւս իր հոգին պինդ կերպով փարեւէ, փակելէ զատ արտասահմանի հայութեան մէկ կարեւոր մասն ալ գոնէ պիտի փութայ դէպի հայրենիք, դէպի սիրակարօտ բարեկամներու մօտ իրեն վերջին խոնջէնքը առնելու, Սակայն ինչ տխրաւիթ յուսալքութիւն, արտասահմանի հայ հասարակութիւնը տակաւին կառնած կը մնայ իր տեղին վրայ, և երկրի ժողովուրդը սովէն — սեւիւր արհեստական — ճնշուած և ծանրակշիռ նեղութիւններէ խելաւորոյս, շնչապառ կը վազէ, կը վազէ՝ արտասահման պահուստի ցուպը ցուրտէն կ'ախքսցած ձեռքին եւ անոնք թշուառութեան ազդարար նշան կարկըտուած «քուրջ» չապիկ մը կ'ունակին, Ու հետզհետեւ երկիրը կը

պարպուի, կ'ամայանայ, Ո՛վ կոյ սակայն չարաբաստիկ ու յուզումնաւիթ այս սեւտրիժ պարագան ինկատի առնեցող, Այսօր շատ քիչ բացառութեամբ, ամբողջ հայ լրագրութիւնը իր ուշադրութիւնը դարձուցած քաղաքական աշխարհին թնդանթի զուսմագոյնութիւն և վառօդի մոխրն ու ծուխին կը սպասէ ակնդէտ, Ոչ ոք իր բաղձանքներուն ու նպատակին իրականացումը կը տեսնէ այս պարագային, բացի թիւրք աղուէսամիտ կառավարութենէն, որը գիտակցօրէն խուլ ու համր կը ձեւացնէ ինքզինք և աններելիօրէն անտարբեր է գաւառներէն հանող աղեխարչ ու աղիողորմ աղաղակներուն որ կը տեղան պաշտօնական շրջանակներու հասցէով ամեն ժամ ու ամեն րոպէ, ներկայ կառավարութիւնը միայն կը սննդոր կղզայ ինքզինք խիստ հանգիստ ու երջանիկ, քանի իր սադայելական սեւ դաւադրանքներուն յաջողութիւնը, — հայ տարրի գաղթումն ու Հայաստանի պարպուիլը — կը նշմարէ Համիտ Հիւսեյնի կառավարութիւնը ցեղանեղ ու արդարապիղծ արիւնահոտ վարագոյրին ետեւ սլըք տած կը ծափէ, կը պարէ անառակ, անզուսպ կնոջ մը շողովիչ ու կողոպտիչ իր յատկութիւններն լցալով, Մեղի բարոյական պարտականութիւն կ'իյնայ գիտակցութեան հրաւիրելու երկրին ժողովուրդը, որը մեր մայր շիղը կը հիւսէ և որմէ մենք կը սպասենք դեռ շատ բաներ, Յարգ սըխալ ճամբով եւ ուղղութեամբ առաջնորդուելու տարաք զտութիւնն ունեցանք, ալ կը բաւէ:

Աւելի յանցաւորը և պատուախառնաւոր արտասահմանի հայութիւնն է, որ կը քաջալիւնէ գաղթը և սին յոյսերով գինովցընելով իրեն մտերիմ սրտակիցները, պատճառ կըլլայ անոնց անշատութիւն, հեռացումին:

Արդ՝ անխտիր ամէն մէկ հայու պարտականութիւնն է մաքաւելու կռուիլ ամեն գնով՝ ազգիւնը համար գաղթական հասանքը, որ կրնայ մեծ և անակրեկալ կարծիք փոթորիկներու մատնել մեր նուիրական ու սրբազան հայրենիքը:

Կարապետ Պ. Փիլիպպուսեան

Պարիս 17 Մարտ

Կը խնդրուի մեր յարգոյ բաժանորդներէն որ հաճին իրենց բաժնեգրիները շրկել:

ՆՈՐ ԿԵՍՆՔ

ԼԵ

Նոյնիսկ հիշանոտ դարերու մէջ Հայ մագիքը եւ քուրճերը մեծ դեր ունեցին եւ ազգային գոյժերու մէջ և մեծ հեղինակութիւն վայելեցին առաջին շրջանակներու մէջ, Մեր թագաւորներու քով բազմաթիւ մեր քրդմապետները եւ միասին խորհրդակցելով ազգին ճակատագիրը վճռել են, ապա թէ ոչ մէկ օրէն միւսը Հաւելը զերը չէր կարող ձեռք ձգել այն ազգեցութիւնը զոր քննեցաւ քրդատենայ դարերու մէջ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ անդր պայքար մղեց հզօր ծրագրով թագաւորին դէմ, երբ կ'ոգտէր քրդատենութիւնն ազգային կրօնք դարձնելու համար:

Մեր երջանկայիտակ թագաւորներէն, պատմագիրները, հոգեւոր երգիչները, ազգին ղեկավարները, մանաւոր ազգային աղետից, առնենք հոգեւորականներէն, իշխանաց եւ զօրապետաց հետ համախորհուրդ եւ համագործակցի:

Հայ քահանան էր որ մեր ուրախութեան ուրախակից եւ վիշտերուն վշտակից եղաւ, ամեն առան պատերազմին առջեւն գնալով խաչը, սկիւնը եւ գիրքը ի ձեռին, յուսահատին յոյս, տառապանքին սփոփ, նահատակին յաւիտենականութիւն խոստանալով:

Թողունք անցած քնացած կաթողիկոսներու, եպիսկոպոսներու, վարդապետներու եւ քահանաներու առ սգն ունեցած ծառայութիւններն որք երկար եւ պատուաբեր չարք մը կրնան կազմել ի մխիթարութիւն հանրութեան, 1828էն ի վեր ութսուն տարուան միջոցին մէջ չորս եպիսկոպոս

ներ ունեցանք կաթողիկոս եւ Պատրիարք զորս պաշտելու աստիճան յարգեցինք սիրեցինք եւ որք իրենց մօզիչ թիւղիչ ազգեցութեամբ սիրեցին մեր սրտին, մեր էութեան, Աշտարակեցի ներսէս, Վարդապետեան Ներսէս, Խրիսեան Մկրտիչ, Իզմիրլեան Մատթէոս:

Չես գիտար ինչ մը ունէին Սոքա, որք կը թի զէին, կը թողէին հաւատարապէս իշխանն ու զօրավարը, վաճառականն ու արհեստաւորը, բարեպաշտն ու սկեպտիկը զրոյ մաղն ու խօսքի մարդը քաղցրին ու շինականը, թերահաւատն ու անհաւատը: Ամենէն սկեպտիկներն անգամ որք կասկածոտութեամբ կը վրաբերին Աննիին եւ իր գոյութեան եւ հոգւոյ անմահութեան վերաբերմամբ, երբ այս հորեւորականներուն առջեւ դռնուցան, թուլցան, կակուղան, հոգիին հաւատքին միջեւ անջրպետ մը կամուրջ մը գտան անոնց անձին մէջ քուրճեան տարուեցան ակնթարթի մը մէջ այնքան հեռուն, որուն գոյութեան կասկածով կը վերաբերուէին:

Ամենէն թերահաւատներն ալ համաձայն են խոտովանելու թէ հոգեւորականին անձին մէջ, — բայց մեր հասկացած հոգեւորականին անձին մէջ — կայ բան մը որ հոգիէն կը խօսի, եւ սիրտը կը գերեզմարէ:

Ութսուն տարուան միջոցին մէջ մենք շատ ունեցանք իշխաններ, զօրավարներ, դիւանագէտներ, արուեստագէտներ, այս կամ այն գիտական ճիւղերու մէջ նշանաւոր անձնաւորութիւններ բայց եւ ոչ մին չի կարողացաւ հասնիլ յարգանքի սիրոյ ակնանմանութեան եւ համակրութեան այն աստիճանին զոր վայելեցին մեր չորս հոգեւորականները:

Սահկայ եթէ մէկ կողմէ ժողովուրդին առ իր կղերն ունեցած սիրոյն մէկ գրաւականն է, միւս կողմէ եւս ապացոյց է որ մեր կղերէն անոնք որ ազգին սիրտցաւ հովիւ եղան, իրենց անձը դրին նոյա բարեւոյն համար, անոնք որ աշխարհային սնոտի եւ սին բաներէն աւելի նախընտրեցին իրենց կոյճան քրդութիւնը եւ ակը ուրւնքի հետ փոխանակելու տղայամուտութիւնը չունեցան, անոնք ի հարկէ ի կենդանութեան սիրտեր դրաւեցին եւ երբ աշխարհէ հրաժեշտ առին, պատմութեան անշնչելի էջերն իրենց անմահ կոթողներ կանգնեցին, եւ պիտի կանգնեն:

Ութսուն տարուան միջոցին մէջ ազգը չորս զխաւոր անցքեր ունեցաւ, որոնց մէջ իրիւս ակ պատուական փայլեցան ի մէջ այլոց, զխաւորաբար Աշտարակեցի, Վարդապետեան, Խրիսեան եւ Իզմիրլեանը:

Ազգ, երբ ձգնւած մը ունեցի է

պահանջներն զէմ որ Տրւոյթի գեան հըռ-
չակաւոր դատին ու խնդրին ատենը
ճշմարտութիւնը խափանելու և Յրան-
սայի պատիւը այդ կերպով արատաւ-
րելու գործը մօլի ազգայնամբններ եւ
ազգայնամուտ ստորին հրապարակագիր-
ներու պաշտօնակալներու զէմ ճա-
կատարաց կոռուզ Զոյան «տղամիտթաւ-
գլազէտը անուանեց» եւ «կեցցէ Յը-
րանսան որ գիտէ վտարել իր ծոցէն
իր անհարգաւոր գաւազները» ըսաւ:
Եթէ կըսեմ այս բաններուն համար
անոր հետ պայքարէին ճշմարտաւ-
թիւնը գրած պիտի ըլլային ու հարկ
չպիտի ըլլար ոչ 48 ժամէն իւրթիւ-
մաթնի մը զէմ գաւազներու եւ յետոյ
պտապառնէն ալ ամ. իսկ դուրս ելլա-
լու եւ ոչ ալ պատու ըրձարտեանի
մը ենթաբերելու եւ անկէ ալ...
վասն զի ինչպէս որ Օրմանեանի ան-
շըկարագիրը, անուղղաւիս եւ վնասա-
կար պատրիարք մը ըլլալու ապացոյց-
ուած ճշմարտութիւն մը ըլլալով մէկ-
տեղ սուտ է 30, 000 ոսկիի իւրացումը
այսպէս ալ սուտ է Գէշեանի 25 ոսկի
ամսական անուանելու խնդիրը: Գէշեան
եթէ կաշառք սլ առնէ այդ ձեռով
չառներ, նոյն պէս սուտ է Իզմիրեանի
մասին ժողովուրդ տալու խնդիրը: սուտ
է անոր համար որ, Գէշեան եթէ շա-
հախոյրդ ու յետագէմ է բայց անխել
չէ, վասն զի այդ տեսակ ժողովուրդներ
կրնան տալ միայն այնպիսի հայեր
որոնք Եթէ վառողք են եւ թէ յիմար,
այս երկուքը միասին ըլլալ նէ մարդ
ժողովուրդի կրնայ ըլլալ, իմ մասին
ես ընաւ չեմ հաւատարացած Գէշեանի
ժողովուրդութեանը: Ինչպէս Բուս չեմ
հաւատարացած Արիւթարի մատնիչ մը
ըլլալուն, թէն. անոր անուղղաւիս
զրազէտ մը եւ իր գրական համբաւին
համեմատ խորունկ հմտութիւնէ զուրկ
ըլլալուն համ. զուրկ է իւր մեռ-
նելէն վ. զին ալ պարծեալ իր մասին
միեւնոյն գաղափարին վրան եմ, թէ-
եւ զինքը մասնիչ հոշակողնին ու
իւր գէմ այդ կերպով աղտոտ պայքար
մղողներ հիմակ սկսած են զրուա-
տակալներ զրել ու զրուատակալներ
հիւրեկալել իրենց թերթին մէջ: Մաք-
րեմ կուղին հայ լրագրական հրապա-
րակը: ասի ներկայ հայ հրապարա-
կագիրներու ձեռքով ըլլալիք բան չէ,
ինչպէս որ Թուրքիան բարեկարգելը
երբեք թիւրքին ձեռքով ըլլալիք բան
չէ: Այս բաները չի հասկցողը բն
մըն ալ հասկնալիք չունի: Հայ խմ-
բագիրներու զիրար մրտնջող պայքա-
պէս «կոյրը կոյրին վրայ ննջալ» է:

Ծանոթ



Թերթերու լախուռն եւ գրգռիչ յար-
ձակո մեծեր բոլոր թուրքերու զէմ
մի քիչ հակազդելու համար, «Բիւզան-
դիոն» միջին ճամբայ ընտել հար-
կագրութեան վերջերս: «Այս երկիրը
մէկէն ի մէկ չէ կարելի բարեկարգել,
հեռագնէ կը շտկուի իմ իմաստով
«Իրազմիկ»ի մէջ գրուած խմբագրա-
կանները ինչո՞ւ ու չազգութեան չեն
առներ այդ տաքղութիւնները: «Բիւ-
զանդիոն»ը միթէ ատկէ տարբ. ր բան
ըսաւ: Բայց «Բիւզանդիոն»ին բուն
յանցտեղը այն չէ, այլ ուղիքի եւ
ցոյցի հայ յեղափոխութիւնը անցո-
ղակի քննադատած ըլլալն է, որուն
չին հանգու. րժեր Պոլսոյ մէջ գաշնակ
ցակալները, ուստի ասոնց համակիր. ր. ր. ր.
խմբագիրները ատիժը գտան իրենց
էստեֆական կիրքին յագուրդ տալու
«կիտվ. ր տինիւն սէօյտինի»ի ձե-
ով:

ԴՈՒՆԱԿԱՅԻՒՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Մարդկային օրն է. երեկոյեան
Դոնաւայէթի արարողութիւնը՝ որ հայ
եկեղեցւոյ ամենէն խորհրդաւոր արա-
րողութիւններէն մին է. հաւատաց
եալներու մի երկսեռ բազմութիւն փու-
թացած է ներկայ գտնուիլ: Լուսա-
կայն յա ալի է ըսել որ հայ մանկը-
տին է որ այդտեղ աչքի կը զարնէ
իր տիպար նկարագրի աւարդու-
թեամբը:
Սրբութեան տուն, աղօթք եւն ա-
մենքն ալ մէկդի թողուլ նոյնիսկ ա-
մենէն ւելի ջերմեանը երկրպագուն
իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած
է մանուկներուն շուրջը:
Ազ ցիւներ (թէքմէ) են որ իրարու
կը տուրին, կուրփի հարուածներ, ի-
րարու կը յաջորդեն, կատարելով ըմ-
բշտութեամբ կը ներկայացնեն սեռա-
բանը, եւ այս ամենքի վրայ թրքերէն
հայերէնաց տեղատարափ մըն է որ կը
թափի բերաններէն: Երեւակայն մի
անգամ հայերէն անելի տղաք երու
այս ընթացքը:
Փարիզեան Կ. մէնը ինչ որ չընէր
պուլլվաններու վրայ կընէ հայ մա-
նուկը սրբութեան խորանին առջեւ:
Այս անգամ ներկայ երկտողով խոր-
հուրդ կուտար Գ. Գ. ուսուցիչնե-
րուն որ Զատիկեան տօներու առթիւ
բարեհաճութիւնը ունենան իրենց ա-
շակերտներու պիտոն հսկելու եկե-
ղեցւոյ մէջ տեղի չըտալու համար
հասարակական զրուանաց եւ զայնու-
թիւն:
Միշտ աչքի խառն լպէտք է ունե-
նալ որ տօնական օրերու մէջ օտար-
ներն ալ անպակաս կրնան եկեղեցւոյ
մէջ, հասեալքար գէթ առեւտու պէտք
է փոխել ջուր ընթացքը եւ ցոյց
տալ մեր իսկական տիպը:
Իսկ Գ. Գ. ուսուցիչներ որ զրուա-
տութեան առաջնայն կը համար-
ուին խղճահարութիւն պէտք է ու-
նենան, գիտնալով մշտ որ հասարա-
կական շրջանները մարտնչու համար
պարտին իրաւ. պարտաճանաչ:
Յոսով ենք որ միշտայն երկտողով
կուտար այն իր բարեբար ազգեցութիւնը:
Ուրիշ առթիւ կ'անդադրուանք
հայ վարժարանի շուրջը:

Հրանտ Համի-Վրդանեան

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

Էյմիսած է կ'իմաստ Մշակ թէ կա.
թողիկոսական Տեղապահ սրբազանը
դիմեր է Կովկասի փոխարքային խըն.
դրելով որ Թիւրքահայաստանի ի նը
պատու գործող հանգանակիչ մասնաժո-
ղովին կրկին թոյլատրուի շարունա-
կելու իր մա. դաստիարակ գործ տարի
մը եւս:
— Տփղիսի քաղաքացի փոխանոր
դը Տ. Ա. խաղիսեան Կովկասի փոխա-
րքային ներկայանալով խնդրած է թոյլ
տուութիւն հրապարակային քննութե-
ան ենթարկելու այն խնդիրները թէ
ինչ միջոցներով պէտք է կոխ մղել
յափշտակութիւններու, սպաննու-
թիւններու եւ շանթաթի զէմ:
— Տփղիսի հայոց հետք ընկեցութիւնը
անցել 1909 տարւոյ չրջանին մէջ
մուտքը ունեցած է 35, 862 բուպիւ:
— Թիւրքիէն կը գրեն թէ գարունը
բացուելուն հետ գաղթականներու
մեծ խումբեր կը փութան Թիւրքիա
անցնելու Անցորդներու մեծ մասը առ
այժմ աղքատ Ասորիներն են վերջին

օրերուն մէջ երկիր դարձող հայ գաղ-
թականներու թիւը ակնթիւն է: Ասոնց
մէջ հարուստներ եւ ունեւորներ ալ
կան որոնք իրենց յոյսերը դրն են
իրենց գրպանի ոյժին վրայ մինչդեռ
աշուր գաղթները հացի ստակ չունեն:

ԱԶԳԱՅԻՆ

Տիգրան Գարակէօզեանի կուտ-
կին հետեւանք եղբորը կողմէ
Ազգին յանձնուած 20000 ոսկիի
գործածութեան հաշուեցոյցը
Խնամակալութեան կողմէ հրա-
տարակալութեան տրուած է 15000
ոսկիով Բերայի Խալիլիալ Բալա
սը գնուած է և կիցը գտնուած
հոգն ալ 2000ի գնուելով 3000
ոսկի ալ շինութեան և նորոգու-
թեան ծախսուած է: Այսօր այդ
պանդոկին 35 000 ոսկի տուող
կայ եղբոր Այս պանդոկին հա-
տոյթը Եթէ Գուլէի Որբանոցին
յատկացուած է: Որբանոցին վե-
րաշինութիւնը թէեւ տակաւին
ոկսած չէ, բայց 5500 ոսկի տրա-
մադրելի գումար մը կայ:
— Ամէն տարի Զատիկի առթիւ
իր Սուլթանէն շնորհ մը Պատ-
րիարքարաններու տրուած գու-
մարը այս տարի ալ պիտի տըր-
ուի նախարարաց խորհուրդին ո-
րոշմամբ պետական գանձէն: Յու-
նաց 6000 զրշ. Հայոց 6000 զրշ.
սրուն 2000ը Հայ-Հռոմէականաց:
— Մշոյ դ. շտի հայ գիւղերուն
մէջ Գիւրտ պէյերը և հարկահա-
ւաքները դեռ կը շարունակեն
բռնութիւնները: «Բիւզանդիոն»
վարչապետ Հիւրի փաշային ու-
շադրութիւնը հրաւիրելով, պա-
տասխանատուներուն պատժուիլը
կը պահանջէ ու կը յաւելու թէ,
այս կարգի անխիղճ հարկահա-
ւաքներ կամ Գիւրտ պէյեր ան-
պատիժ թողուլ անոնց արարքը
քաջալերել կը նշանակէ:
— Կէյլէի Միջագիւղի մէջ Հա-
յոց և Յունաց մէջ վէճը կը շա-
րունակէ եղբոր Կառավարիչը հե-
ռագրած է թէ վերջին օրերս
դարձեալ վէճ մը ծագելով, Յոյ-
ներէն երկու հոգի վիրաւորուել
է, իսկ Հայերէն մեռնող չէ ե-
ղած, միայն 10 հայեր ձերբա-
կալուել են:
— Նպաստից Յանձնաժողովը
կրկին որոշած է նպաստ 80 ոսկի
զրկել Երզնկայ, 50 ոսկի Կիւրին
100 ոսկի Վան, 100 ոսկի Կարին:
75 ոսկի Սեբաստիա, կարօտեալ-
ներուն բաշխելու համար:
— Մշոյ վարդէնիս և Հէրկէր
տէք գիւղերու հողերը 200 ոս-
կիի փոխարէն գրաւի տակ ըլլա-
լով, Մարտի վերջը պիտի ծախ-
ուին եղբոր ուստի հեռագրաւ
խնդրուած է որնպատից Յանձ-
նաժողովը այդ գումարը զրկէ:
— «Բիւզանդիոն» կը տեղեկա-
նայ թէ Օսմանեան Խորհրդարա-
նի իսլամ ուղղամեքերը հակառակ

քուէ պիտի տան եղբոր ոչ իսլամ
տարրերէ զինուոր առնուելու ա-
ռաջարկին: Եթէ ստոյգ է այս
տեղեկութիւնը, անգամ մըն ալ կա
պայուցուի թէ, խորհրդարանի
իսլամ մեծամասնութեան միտքը
եւ դատելակերպը տակաւին չի
Հաշտուիր Սահմանադրութեան
հաւասարութեան սկզբունքին
հետ, ինչ որ կը նշանակէ թէ
Խիւրքիան իր գլխուն չի պիտի
բաւեկարգուի:
— Ատանայի առաջնորդ Տէր
Մուշեղ եպ. Եփրատոս հասած եւ
փայլուն ընդունելութիւն մը գը-
տած է տեղին աղագիտներու
կողմէ: Մուշեղ եպ. իր վիճակին
մէջ հողագործական վարժարան
մը հիմնելու համար հարկ եղած
դրամագումարը ձեռք բերել պի-
տի յաշխատի իր այս ողբ սրու-
թեամբը: Եփրատոսի մէջ անոր
յաջողութիւնը ապահովուած կը
նկատուի:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք»ի խմբագրա-
տունէն կարելի է ստանալ
հետեւեալ գիրքերը:
ՀԱՐԻՊ ԱՆՊԷՐ ԳԻՆ 1. Քր
ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ 1. Ք
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր 1.50 Ք
ԹԻԱՊԱՐՏ Բ. 2. Քր
ԻՐԱՆԻՆԻՔԻ հաւաքածոյ մէկ
տարուան 12 Քր.
Իրաւը կանխիկ չի շրկուած
յանձնարարութիւնք նկատի չեն
առնուիր:
Գարոցական տղայոց համար
Ազատ Երգարանը կը վա-
ճաւուր 80 սանդիմի:
«ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»
Ոգոս Հայաքեր Սմեթիւայ
Բաժնեգին տարեկան 36 Քր.
վեցամեայ 18 Քր.
Հասցէ
Տեօ. էն «Բիւզանդիոն» հայ օրաքերի
4, Պոլիս:

ԲԱԶՄԱՎԷՊ

Ազգային, Բանասիրական, Գրական
Պատմական Կենսագրական ամսաթերթ
Բաժնեգին տարեկան 10 Քր. հասցէ
Խմբ. «Բազմավեպ»ի, Ս. Ղազար
(Իտալիա) վեներտիկ

«Ա Զ Գ»

Շաքարաքերը
Ազգային, Գրական եւ Բաղադական
հարցերով զբաղող այս մեծածաւալ
շաքարաքերը կը հրատարակուի Ա-
մբիկայի Պոթոն քաղաքին մէջ: տալ
րեկան բաժնեգիւն է. 12 Քր. կանխիկ-
հասցէն է Խմբագրութիւն «Ազգ» լրագրի
Սր. 81 Պաւլ ՊՕՍԻՕՆ, ՄէՍ:

